«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ

Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի նոր կամրջի շինարարության ծրագիր

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն» անցման կետի կամրջի կառուցման ծրագրի վարկային համաձայնագիրը ստորագրվել է 2012թ. նոյեմբերի 23-ին: 2014 դեկտեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության և Վրաստանի կառավարությունների միջև կնքվել է միջկառավարական համաձայնագիր, որով ստեղծվել է միջկառավարական հանձնաժողով՝ ծրագիրը Հայաստանի և Վրաստանի կողմից համատեղ իրականացնելու նպատակով:

Բագրատաշեն-Սադախլո անցման կետում նոր կամրջի կառուցումը կնպաստի ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ծավալների մեծացմանը, սպասարկման որակի բարձրացմանն ու ժամանակի խնայողությանը, կդյուրինացնի առևտուրը Վրաստանի, Ռուսաստանի և Եվրոպայի հետ:

Ծրագրի խորհրդատու՝ «Սուսունգ էնջիներինգ և Կորեա քընսալթանթս Ինթերնեյշնլ» ՀՁ

Ծրագրի կապալառու՝ «Թունել Սադ Արիանա» ՓԲԸ (կամրջի նախագծող և շինարարությունն իրականացնող ընկերություն)

Կապալառուն սահմանված պայմանագրային ժամկետում նախագիծը ներկայացրել է տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությանը, երկու պատվիրատուներին, ինչպես նաև երկու երկրների արտագերատեսչական փորձաքննությանը: Ստացվել են տեխնիկական վերահսկողի, հայկական ու վրացական արտագերատեսչական փորձաքննության դրական եզրակացությունները, ինչպես նաև պետական համալիր փորձաքննության դրական եզրակացությունը:

Շինարարության փուլի մեկնարկը տրվել է 2021 թվականի մայիսի 13-ին: Կամրջի շինարարության համար նախատեսված էր 12 ամիս ժամկետ: 2022թ. հուլիսի 15-ի դրությամբ կամրջի շինարարությունն ավարտվել է, սահմանային անցակետում երթևեկությունն իրականացվում է նոր կամրջով:

Նոր կառուցվող կամուրջը բաղկացած է երկու ուղղություններն առանձին սպասարկող՝ իրարից 1 մետր հեռավորությամբ երկու զուգահեռ կամուրջներից՝ յուրաքանչյուրը երկու երթևեկելի գոտիներով: 160մ երկարությամբ կամուրջն ունի 32-ական մ երկարությամբ 5 թռիչքներ, յուրաքանչյուր կամրջի ընդհանուր լայնությունը 11.85մ է, երթևեկելի հատվածի

լայնությունը՝ 8.35մ։ Կամուրջն ունի արտաքին լուսավորություն և ջրահեռացման համակարգ, երկու կողմից մոտեցնող ճանապարհներ, հետիոտնի համար նախատեսված մայթեր։